



### ԵՐԵՒԱԿԻՆ ՍԼԱՆԴՈՒԽԸ ՊՈՂԱՐԵԱՆ

Յաւով լսեցինք յանկարծական մահը Երէցցկին, Տիրամայր Սանդուխստ Պօղարեանի — մայրը Ս. Աթոռոյ Միաբան եւ «Սիոն»ի աշխատակց Հոգ. Տ. Նորայր Վրդ. Պօղարեանի — որ տեղի ունեցած է 4 Փետրուար 1949ին Հալէպի մէջ:

Այս առթիւ «Սիոն», յանուն Նորին Ամեն. Ս. Պատրիարք Հօր եւ Ս. Յակոբեանց Միաբանութեան, կը յայտնէ իր ցաւակցութիւնները Եղբայրակից Հոգ. Տ. Նորայր Հայր սուրբին, ինչպէս նաև Պօղարեան ընտանիքի համայն սգաւոր պարագաներուն, մաղելով երանական հանգիստ բարեկրօն Երէցցկնոց հոգւոյն:

### Վ. Ա. Հ. Ա. Ն Ո Ւ Զ Ո Ւ Խ Ե Ս. Ն

Յաւով լսեցինք նոյնպէս մահը պէյրութարնակ ազգայիններէն «Սիոն» ամսագրիս գործակալ, գրավաճառ. Պր. Վահան Ռւզունեանին, որ տեղի ունեցած է 30 Յունուար 1949ին Գէյրութի մէջ:

Կը յայտնենք մեր ցաւակցութիւնները Ռւզունեան հարազատներուն եւ ընտանիքի բոլոր սգաւոր պարագաներուն ու կը մաղթինք երկնային հանգիստ հանգուցեալի հոգւոյն:

### Լ Ե Ւ Ո Ն Խ Ա Զ Ա Տ Ո Ւ Ր Ե Ս. Ն

Հոս ցաւով կը յայտնենք նաև մահը, նախորդ երկու հանգուցեալ Ս. Պատրիարքներու խոհարար եւ վերջիրս վանքի խոհանոցին մէջ նոյն գործը շարունակող, կետոն Խաչատուրեանի որ տեղի ունեցաւ Փետրուար 24ին, յատ երկարատեւ հիւանդութեան: Մեր ցաւակցութիւնները իր ամիսոց, զաւկին եւ իր բոլոր պարագաներուն:

Խաղաղութիւն իր հոգիին:

